

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Արրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Միքայել Մելքունյանի, Նաիրա Զոհրաբյանի, Էլինար Վարդանյանի, Ստեփան Մարգարյանի և Վահան Բաբայանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-219-26.02.2013-ՏՀ-010/0) վերաբերյալ:

1. Օրենքի նախագծով առաջարկվում է նվազեցնել Երևան քաղաքում թեթև մարդատար մեքենայով իրականացվող ուղևորափոխադրման գործունեության համար սահմանված արտոնագրային վճարի դրույքաչափը՝ մեկ ավտոմեքենայի համար ամսական 9500 դրամի փոխարեն սահմանելով ամսական 7000 դրամ: Համաձայն օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է Երևան քաղա-

քում թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնող տնտեսավարող սուբյեկտների հարկման ոլորտում առավել բարենպաստ միջավայրի ձևավորման և մի շարք հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ: Մինչդեռ՝

1) նշված չեն այն հիմնախնդիրները, որոնք առկա են արտոնագրային վճարի գործող դրույքաչափերի կիրառության դեպքում.

2) «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության գործող օրենքով Երևան քաղաքում կազմակերպվող թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության համար սահմանված է մեկ ավտոմեքենայի համար օրական ընդամենը 317 դրամ արտոնագրային վճար, որը Երևան քաղաքում կազմակերպվող ուղևորափոխադրման գործունեության համար չի կարող համարվել էական հարկային բեռ՝ հաշվի առնելով Երևան քաղաքի տնտեսական ակտիվության մակարդակը, ինչպես նաև այն հանգամանքը, որ արտոնագրային վճարի մեկ օրվան բաժին ընկնող գումարը համարժեք է մեկ ամենակարճ ուղևորափոխադրման համար ստացվող գումարի կեսին.

3) անհասկանալի է, թե ինչպիսի բարենպաստ միջավայրի ձևավորման անհրաժեշտության մասին է խոսքը՝ այն դեպքում, երբ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրումների գործունեության կազմակերպումը ներառված է արտոնագրային վճարների համակարգում, ինչն արդեն իսկ ենթադրում է հարկման առավելագույն պարզեցված ընթացակարգերի կիրառություն:

2. Համաձայն օրենքի նախագծին կից ներկայացված հիմնավորման՝ ներկայումս Երևան քաղաքում թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության կազմակերպման համար նախկինի համեմատությամբ սահմանված է արտոնագրային վճարի ավելի բարձր դրույքաչափ:

Այս կապակցությամբ, հայտնում ենք, որ 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում

փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության ՀՕ-243-Ն օրենքով, նույն օրենքի NN 7 և 8 հավելվածների համաձայն թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեություն իրականացնող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար արտոնագրային վճարի դրույքաչափը չի փոփոխվել: Կատարված օրենսդրական փոփոխությամբ ուժը կորցրած է ճանաչվել նշված օրենքի N 2 հավելվածը, և թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրական դրույթները միասնականացվել են: Արդյունքում որոշակիորեն վերանայվել են թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեություն իրականացնող որոշ անհատ ձեռնարկատերերի համար նախատեսված արտոնագրային վճարների դրույքաչափերը՝ Երևան քաղաքում իրականացվող գործունեության մասով դրանք փոքր-ինչ բարձրացվել են, իսկ հանրապետության այլ վայրերում իրականացվող գործունեության մասով՝ նկատելիորեն իջեցվել: Ընդ որում, արտոնագրային վճարի դրույքաչափերի վերանայումները վերաբերում են բացառապես այն անհատ ձեռնարկատերերին, որոնք, բավարարելով մինչև 2013 թվականի հունվարի 1-ը գործող՝ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ վարձու աշխատող չունենալու և տարվա ընթացքում մինչև 6 մլն դրամի իրացման շրջանառության շեմը չգերազանցելու պահանջները, կարող էին արտոնագրային վճար վճարող համարվել միայն եռամսյակի, կիսամսյակի, ինն ամսվա կամ տարվա համար: Հատկանշական է նաև այն հանգամանքը, որ այդ դեպքում արտոնագրային վճար վճարող համարվելու մասին հայտարարությունը հարկային մարմին պետք է ներկայացվեր նշված ժամանակաշրջանների առաջին ամսվա ընթացքում, հակառակ դեպքում նույնիսկ օրենքի՝ նշված պահանջները բավարարող անհատ ձեռնարկատերերն առնվազն մինչև տվյալ եռամսյակի ավարտն արտոնագրային վճար վճարող կհամարվեին «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի NN 7 և 8 հավելված-

ներով սահմանված կարգով և դրույքաչափով, որը ենթադրում է ամսական կտրվածքով արտոնագրային վճար վճարող համարվելու հնարավորություն, ինչպես նաև յուրաքանչյուր ավտոմեքենայի համար ամսական 9500 դրամ արտոնագրային վճարի դրույքաչափի կիրառություն: Այս առումով, գտնում ենք, որ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեություն իրականացնող անհատ ձեռնարկատերերի հիմնական մասի համար 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենքում կատարված փոփոխություններով արտոնագրային վճարի դրույքաչափը չի փոփոխվել:

Հարկ ենք համարում նշել նաև, որ օրենքի նախագծով առաջարկվում է թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրման գործունեության համար սահմանված արտոնագրային վճարն իջեցնել ոչ միայն այն անհատ ձեռնարկատերերի համար, որոնց մասով դրույքաչափը փոքր-ինչ (մեկ օրվա հաշվով՝ 90 դրամ) բարձրացվել է 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենքի փոփոխությամբ, այլ նաև 2012 թվականի ընթացքում «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի NN 7 և 8 հավելվածներով սահմանված կարգով արտոնագրային վճար վճարող համարված բոլոր կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար, ինչը հիմնավորված չէ:

3. Օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանման նպատակով օրենքի նախագծի 1-ին հոդվածի մասի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքի նախագծի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Սուրեն Կարայանը:

Օրենքի նախագծի ընդունման դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Կից ներկայացվող փաստաթղթերում տրված է օրենքի նախագծի կարգավորման ազդեցության գնահատականը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

**ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին»
Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի ընդունման դեպքում**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
ընդունումը առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<<Արտոնագրային վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի
Նախագծի բնապահպանության բնագավառում կարգավորման**

1. <<Արտոնագրային վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Նախագծի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Նախագիծը բնապահպանության ոլորտին չի առնչվում, այդ ոլորտը կանոնա-կարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չի հակասում:

Օրենքի կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխա-տեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

**«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
Նախագծի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության
բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի
(այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման
ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծի ընդունման
դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա
նախատեսվում է *դրական ազդեցություն*:

Նախագծով առաջարկվում է Երևան քաղաքում թեթև մարդատար մեքենայով
ուղևորափոխադրում իրականացնող գործունեության համար որպես բազային
հարկային արտոնագրային վճար՝ ներկայումս գործող 9500 ՀՀ դրամի փոխարեն մեկ
մեքենայի համար սահմանել 7000 ՀՀ դրամ, ինչի արդյունքում կնվազեն տվյալ ոլորտում
գործունեություն իրականացնող կազմակերպությունների ֆինանսական ծախսերը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Նախագծի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունմամբ կսահմանվի ավելի ցածր դրույքաչափ՝ Երևան քաղաքում թեթև մարդաստար մեքենայով ուղևորափոխադրում իրականացվող գործունեության համար:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ ապրանքային շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ ապրանքային շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

Եզրակացություն

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N 18-Ն որոշման համաձայն:

Նախագծի սոցիալական ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագիծը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունի **դրական ազդեցություն,**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից՝ **դրական ազդեցություն:**

**ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**

**«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի վերաբերյալ**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծն
իր մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի
«Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կար-
գավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին»
թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված Կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն
գործոն չի պարունակում:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

**«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի
նախագծի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման
վերաբերյալ**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում
փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով
առաջարկվում նվազեցնել Երևան քաղաքում թեթև մարդատար մեքենայով իրականացվող
ուղևորափոխադրման գործունեության համար սահմանված արտոնագրային վճարի դրույքա-
չափը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծի ընդունումը պետական բյուջեի
եկամուտների վրա կունենա բացասական, իսկ ծախսերի վրա՝ չեզոք ազդեցություն:

Պ-219-26.02.2013-ՏՀ-010/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈԳՎԱԾ 1. «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության 2010թ. դեկտեմբերի 22-ի ՀՕ-209-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) N 8 հավելվածի՝

1) 9-րդ կետի աղյուսակում թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում տողը շարադրել նոր խմբագրությամբ.

թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում	մեքենայի քանակ	7000	5600	5600	2800	1400
--	----------------	------	------	------	------	------

ՀՈԳՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ » ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾԻ
ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ**

«Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը պայմանավորված է Երևան քաղաքում թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների հարկման, ոլորտում առավել բարենպաստ միջավայրի ձևավորման, կարգավորման եւ մի շարք հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությամբ:

Ներկայումս գործող «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Երևան քաղաքում թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում գործունեությունը հարկվում է նախկինի համեմատ ավելի բարձր հարկային դրույքաչափով:

Սույն փոփոխությունը ելնում է Երևան քաղաքում թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում գործունեության համար սահմանված նախկին եռամսյակային 20500 ՀՀ դրամ արտոնագրային վճարի դրույքաչափի տրամաբանությունից: Փաստորեն, ներկայումս գործող «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն անհամեմատ խստացվել է հարկային դրույքաչափը միայն Երևան քաղաքում թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար:

Հաշվի առնելով առաջացած խնդիրները եւ դրանց հետեւանքները՝ առաջարկում ենք «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարել համապատասխան փոփոխություն, մասնավորապես՝ Երևան քաղաքում՝ թեթև մարդատար մեքենայով ուղևորափոխադրում իրականացնող գործունեության

համար որպես բազային հարկային արտոնագրային վճար՝ ներկայումս գործող 9500 ՀՀ
դրամի փոխարեն մեկ մեքենայի համար սահմանել 7000 ՀՀ դրամ: